Համար 26. Գործածված է 3 անգամ, գմբեթի վրա (մեկը գլխիվայր)։

Համար 27. Գործածված է մեկ անգամ, գմբեթի վրա։

Համար 28. Գործածված է մեկ անգամ, գմբեթի վրա։

Համար 29. Գործածված է մեկ անգամ, գմբեթի վրա։

Համար 30. Գործածված է մեկ անգամ, արևելյան պատի վրա։

Համար 31. Գործածված է 17 անգամ։ Հարավային պատին՝ 3 (մեկը գլխիվայր). հյուսիսային պատին՝ 2 (մեկը կրկնակի մեծ) գմբեթի վրա 2 (մեկը գլխիվայր). եռաստիճան հիմքի Ա. աստիճանի վրա՝ 2. ներսում՝ 7 (մեկը գլխիվայր). հյուսիս-արևելյան խորանում 1 անգամ (կողքանց)։

Համար 32. Գործածված է մեկ անգամ, գմբեթի վրա։

Համար 33. Գործածված է 3 անգամ։ Հարավային պատին՝ 1. արևմտյան պատին՝ 1. հարավ-արևելյան խորանում՝ 1 անգամ։

Համար 34. Գործածված է 6 անգամ։ Հարավային պատին՝ 3. արևելյան պատին՝ 3 անգամ։

Համար 35. Գործածված է 10 անգամ։ Հարավային պատին՝ 1. հյուսիսային պատին՝ 7 (մեկի միջին դծերը ուղղագիծ և ելկուսը անկյունով դրված). ներսում՝ 2 (մեկը պատուհանը փակող քարի վրա).

Համար 36. Գործածված է մեկ անգամ, հարավ-արևելյան խորանում։

Համար 37. Գործածված է մեկ անգամ, հյուսիսային պատին։

Համար 38. Գործածված է մեկ անգամ, հյուսիսային պատի վրա։

Համար 39. Գործածված է մեկ անգամ, հյուսիսային պատի վրա։

ԹԱՆԱՏԱՑ ՎԱՆՔ

Սա. Օրբելյանը Սյունյաց նահանգի վանքերի թվարկության մեջ հիշատակում է երկու նույնանուն վանքեր. մեկը Ծղուկ գավառում, մյուսը՝ Վայոց ձորում։ Վերջինիս տեղը լավ հայտնի է. այն գտնվում է այժմյան Եղեգնաձորի շրջանի Վերնաշեն և Մալիշկա գյուղերի արանքում և կոչվում է Ղարա-վանք, որի ղուլդ եկեղեցիներից մեկը կոչվում է ս. Սանվանոս և մյուսը՝ ս. Նշան. հուշարձանի բոլոր շենքերը կառուցված են 13-րդ դարում՝ Պռոշյանների կողմից։

Մյուս, հնագույն Թանահատի վանքը, որը գտնվելիս է եղել Ծղուկ գավառի մեջ, և որը Տաթևից հետո երկրորդն է հիշատակված պատմագրի ցուցակի մեջ և անվանված «մեծ առաքինարան», մինչև վերջին տասնամյակները մնացել էր անհայտության մեջ։

Հուշարձանի անհայտությունը և ինչպես Օրբելյանի, այնպես էլ հետագա աղբյուրների

մեջ հուշարձանի անվան տարբեր գրությունները՝ Թանահատ, Թանատէ, Թանատի, Թանատա և այլն, առիթ են ավել շփոթելու այս երկու հուշարձաններն իրար հետ, և նրանց հետ կապված պատմա-կուլտուրական երևույթները, որ հիշատակված են աղբյուրներում՝ խառն կերպով վերագրել մեկին, կամ մյուսին։

Հիշենք նախ, որ անունների այս տարբերությունները լոկ գրչական տարբերակներ են Թանահատ, կամ որ նույնն է Թանատ բառի, որի իմաստի բացատրությունը տվել է Ստ. Օրբելյանը.—«հեռացնալք լամենայն փափուկ կերակրաց. վասն որոյ և բանահատք կոչեցան» (էջ 143) և կամ՝ «...ոչ ուտին յանձն ի կիւրակէքն ի թան կամ ի պանիր կամ յիւղ խթիլ, այլ յանջարոք և ընդով շատանալին, վասն որոյ թանահատք կոչեցան» (էջ 160)։

Հիմնական տեղեկությունները այս հուշարձանի մասին Ստ. Օրբելյանը քաղել է տեղում եղած արձանագրություններից, որոնցից ամենակարևորի, որի մեջ հուշարձանի կառուցման ժամանակի և հայր Մխիթարի մասին եղած ավանդությունները են գրված եղել, բեկորները, բարեբախտաբար մնացել են տեղում։

Այժմ կիսականգուն մնացած այս հուշարձանը մեր ամենահին և լավագույն բաղիլիկ շենքերից է և կառուցված առնվազն հինգերորդ դարում։

Հուշարձանը շինված է կարմրավուն քարից, միանեֆ բաղիլիկա է, բեմի լրիվ պայտաձև կամարով։ Հարավային կողմից եղել է սյունաղարդ սրահ, չորս սյուների վրա, որի արևելյան ծայրին միակ ավանդատունն է եղել, որը մի դռնով միացել է եկեղեցու հետ, ուղիղ բեմից։

Այժմ փլած է սրահն ամբողջովին, հուշարձանի արևմտյան պատը և ծածկը, որից մնացել է բեմի մի շարք մեծ քարերից շինված կամարը։

Հուշարձանի արևմտյան կողմը կա փոքր գերեզմանատուն, ուր կան խաչքարեր և տապանաքարեր՝ մի քանիսն արձանագրված և մի գետնափոր, կանոնավոր կերպով շինված դամբարան։

Հուշարձանը գտնվում է Սիսիանի շրջանում, Սիսիան գեղի վերին հոսանքում. Արավուս գյուղից 3—4 կիլոմետր դեպի հարավ, անտառապատ լեռան լանջի մի հարթության վրա։

Ստ. Օրբելյանը Մղոկ գավառի գյուղերի ցանկում այս գյուղը հիշատակում է Արևէս ձևով և 7 չափ հարկով, որից երևում է նրա փոքր լինելը։

Հուշարձանին տեղացիներն այժմ կոչում են Կարմիր վանք կամ Ղըղլ վանք։

Հուշարձանի համառոտ նկարագրությունը տվել է Լալայանը (առանց այն ճանաչելու)[1] մանրամասն՝ մենք, ուր և հրատարակել ենք բոլոր արձանագրությունները։

274. ԹԱՆԱՏԱՑ ՎԱՆՔ. արձանագրության երկու բեկորներ. որոնցից՝

1. հարավային ավանդատան սյատի արևելյան անկյունի կիսափուլ մասում, իր նախնական տեղում մնացած երեսպատման քարի վրա. 4 տ.

2. նույնտեղ, պատի տակ ընկած երեսպատման ավելի մեծ քարի վրա. 5 տող։



«Եւ էր եղեալ հայր վանիցն որոյ անուն Մխիթար. որ անցեալ էր ճգնութեամբ ընդ բոլոր հոյլս առաքինեաց, և զգազանս վայրենիս, զարջս և զգայլս ածէր ի հնազանդու-

[1] Ստ Օրբելեան. Պատմութիւն նահանգին Սիսական, էջ, 338, 340, Թիֆլիս 1910։
[2] Աղդ. հանդ., Գ. 189—190
[3] «Տեղեկագիր» Պատմ. և Գրակ. ինստիտուտի, գիրք Ա. 1036, էջ 90—132։

թիւն սուրբ եկեղեցւոյն և ծառայեցուցաներ վանիցն, զոր և արձանն եցոյց երբ արար հարկաւու ՄԵՔՈՐԱՅ, այսինքն եկեղեցւոյս»[1]։

Դրչութեամբ և բովանդակութեամբ մեր բերած երկու բեկորները վերաբերում են միևնույն արձանագրութեանը։ Ինչպես ցույց են տալիս ամբողջ մնացած մի քանի բառերը — հայր Մխիթար, զգվան և հատկապես հայերենում միայն մեկ անգամ Օրբելյանի կողմից այս հատվածում գործածած Մեքորայ բառը — այս բեկորները հենց այն արձանագրության մասերն են, որից օգտվել է պատմագիրը, այդ պատճառով էլ դնում ենք Օրբելյանի այդ հատվածը, որը արձանագրության շարադրանքն է։

Ս. Բարխուդարյան, Տեղեկագիր Պատմ. և Գրակ. ինստիտուտի Ա. էջ 99, 1936 թ.
Լուսանկ. տախտ. XXIV, 95, 96

275. ԹԱՆԱՏԱՑ ՎԱՆՔ *հուշարձանի արևմուտքում գտնվող գերեզմանատան մեջ. օրորոցձև տապանաքարի կողերին. 2 ա.*

ԹԱՆԱՏԱՑՎԱՆԱԿԱՆ
ՀԱՅՐ ԳՐԻԳՈՐ

ԹԱՆԱՏԱՑ ՎԱՆԱԿԱՆ
ՀԱՅՐ ԳՐԻԳՈՐ

Ս. Բարխուդարյան, Տեղեկագիր Ա. էջ 91.
Լուսանկ. տախտ. XXIV, 94

ԹԱՆԱՏԱՑՎԱՆԱԿԱՆ

276. ԹԱՆԱՏԱՑ ՎԱՆՔ. *գերեզմանատան արևմտյան ծայրին կանգնած խաչքարի վրա.*

ՆԼ ՎԵՐԱ
ԵԹ ՓՈԽԵՑ
ԱՆԻ ԱՒԳՐԻ
Ն ԳՈՐԻԿ
ԵՐԵՑ

:ՆԼԵ: ԹԼՈՒԱԿՅԱՆԻՆ ՎԵՐԱՓՈԽԵՑԱՒ
ԳՐԻԳՈՐԻԿ ԵՐԷՑ, ԹԱՆԱՏԱՑ ՎԱՆԱԿԱՆ:

Ս. Բարխուդարյան. Տեղեկագիր Ա. էջ 94
Լուսանկ. տախտ. XXV, 97

277. ԹԱՆԱՏԱՑ ՎԱՆՔ. *հուշարձանի արևելյան կողմում կանգնած խաչքարի վրա.*



ԻՇԵԱՑ ՔՍ. ԱԾ. ԶԳՐԻԳՈՐ
ԵՐԷՑ ՓՐԿԵԱ Ի.....
ՏԱԼՆՋԱՆԼԱՑ:

Ս. Բարխուդարյան. Տեղեկագիր Ա. էջ 193
Լուսանկ. տախտ. XXV, 98

278. ԹԱՆԱՏԱՑ ՎԱՆՔ. *հուշարձանի արևելյան պատի կենտրոնական մասում, արտաքուստ. 1 տող.*

ԱՒԳՆԱԿԱՆԷ ԱԾ

ԱՒԳՆԱԿԱՆ Է ԱԾ.

Ս. Բարխուդարյան, Տեղեկագիր Ա. էջ 103

[1] Ստ. Օրբելյան *161։*